ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Յ Ո Ւ Ն

Ն. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի և 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 395-Ա որոշումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Նունե Եղիազարյանին*** տրամադրել 2019 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից՝ տասը աշխատանքային օր, 2019 թվականի օգոստոսի 19-ից մինչև օգոստոսի 30-ը ներառյալ:

2. ***Նունե Եղիազարյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Վահագն Ղարիբյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Վահագն Ղարիբյանին*** և «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Շուշանիկ Մուրադյանին*** ապահովել «Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Շուշանիկ Մուրադյան)* կողմից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 06
ք. Հրազդան
N 137-Ա